

Ներկայացված է ԵրՊԼՀ-ի գիտական խորհրդի կողմից (20.12.2006 N3 նիստ)

Հաստատված է ԵրՊԼՀ-ի խորհրդի կողմից (13.01.2007 N1 նիստ)



**ԵՐԵՎԱՆԻ Վ. ԲՐՅՈՒՄՈՎԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԼԵզՎԱԲԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
2006-2010 ԹԹ.**

ԵՐԵՎԱՆ 2007

Համալսարանը, արժեքավորելով և պահպանելով դասական լեզվաբանական բուհի իր առաքելությունը, դրա հետ մեկտեղ զարգացնելու և ընդլայնելու է հումանիտար և միջմշակութային հաղորդակցմանը վերաբերող ուղղությունները: Բոլոնիայի հռչակագրի դրույթներին համապատասխան՝ ԵրՊԼՀ-ում արդեն կիրառվում է եռաստիճան բարձրագույն կրթության համակարգը, իսկ 2006 թվականից նաև՝ կրեդիտային համակարգը: Ջարգացնելով ինչպես ավանդական, այնպես էլ նոր մասնագիտություններ, մասնագիտացումներ, արմատավորելով ուսուցման նոր ձևեր՝ բուհը ի վիճակի է տարածաշրջանում և ՀՀ-ում դառնալ լեզվաբանական կրթության առաջատար կենտրոններից մեկը:

Սույն ռազմավարությունն ընդգրկում է հետևյալ բաժինները՝

0. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

1. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐՈՒՄ ԵՎ ՆՈՐԱՑՈՒՄ,
2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ,
3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՄՁԱԿԵՐՊՈՒՄ և ՆՐԱ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ,
4. ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
6. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
7. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
8. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ
9. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը 1935թ. փետրվարի 4-ին հիմնադրված ռուսական մանկավարժական երկամյա կուրսերի իրավահաջորդն է: 1936թ. բացվել է գերմաներենի, իսկ մեկ տարի անց՝ ֆրանսերենի և անգլերենի բաժինները, որոնք 1948թ. վերափոխվեցին ֆակուլտետների:

1937թ. ինստիտուտը տվել է ռուսաց լեզվի ուսուցիչների առաջին շրջանավարտները:

1940թ. ինստիտուտը վերանվանվել է Երևանի պետական ռուսական մանկավարժական ինստիտուտ:

1955թ. ինստիտուտը պահպանելով կառուցվածքային ինքնավարությունը ընդգրկվել է Երևանի պետական համալսարանի կազմի մեջ:

1962թ. ինստիտուտը նորից դարձել է ինքնուրույն հաստատություն և կոչվել է Վալերի Բրյուսովի անունով:

1985թ. ինստիտուտը պարզևատրվել է ժողովուրդների բարեկամության շքանշանով:

1993թ. վերանվանվել է Երևանի Վ.Յա.Բրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտ:

2001թ. ինստիտուտը դարձել է համալսարան և անվանվել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան:

Իր գործունեության ընթացքում Համալսարանը պատրաստել է շուրջ 25000 մասնագետներ՝ ռուսերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի, իտալերենի, իսպաներենի, գործնական հոգեբանության, պատմության, քաղաքագիտության, երկրագիտության և այլ մասնագիտությունների գծով:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանն իր առաքելությունն է համարում.

- Կրթության միջոցով նպաստել Հայաստանի և աշխարհի ժողովուրդների ու պետությունների միջև բարեկամության հաստատմանը, քաղաքական, տնտեսական, մշակութային կապերի ամրապնդմանը, նրանց լեզուների և մշակույթների տարածմանը, համերաշխության, հանդուրժողականության, ժողովրդավարության գաղափարների և արժեքների արմատավորմանը:

- Լինել համաշխարհային և ազգային կրթական համակարգի մաս կազմող, գիտելիքի վրա հիմնված տեղեկատվական հասարակության, դինամիկ փոխվող աշխատուժի շուկայի պահանջներին բավարարող անհատի մտավոր, քաղաքացիական ու բարոյական որակների ձևավորմանը նպաստող բուհ:

- Դառնալ մարդասիրական արժեքների, միջնշակութային հաղորդակցման, լեզվաբանական մտքի զարգացման, հումանիտար գիտությունների և մասնավորապես լեզվաբանության ու կրթության նորագույն ուղղությունների և հետազոտական մեթոդների արմատավորման ու տարածման օջախ:

- Պատրաստել խոր գիտելիքներով օժտված և գործնական հմտություններ ունեցող բարձրորակ կադրեր:

- Դառնալ բազմալեզվության, լեզվակրթության սկզբունքների մշակման, ժամանակակից լեզվաքաղաքականության տարածման և իրականացման կենտրոն:

Նոր՝ տեղեկատվական հասարակության պայմաններում, հումանիտար հաղորդակցման գործընթացներում, դառնալ գիտահետազոտական և կրթամշակութային կենտրոն, որի հիմնական խնդիրներն ու նպատակներն պետք է լինեն.

- քաղաքական
 - ինտեգրվել եվրոպական կրթական համակարգին,
 - դառնալ միջնշակութային հաղորդակցության, լեզվաքաղաքականության և լեզվակրթության սկզբունքների մշակման և իրագործման կենտրոն,
 - դառնալ հանրապետությունում բազմալեզվության, միջնշակութային հաղորդակցության, ԵՎրախորհրդի և ԵՎրամիության լեզվաքաղաքականության և քաղաքացիական կրթության տարածման և իրագործման կրթամշակութային կենտրոն.
- գիտահետազոտական
 - դառնալ հումանիտար, բանասիրական, լեզվաբանական և լեզվամշակութային դասական և նորագույն ուղղությունների ու մեթոդների զարգացման, հիմնարար և կիրառական հետազոտությունների կենտրոն.
- կրթական
 - դառնալ որակապես նոր կրթական հաստատություն՝ ժողովրդավարացման և հումանիտարացման հիման վրա,
 - պատրաստել տեղեկատվական հասարակության պահանջներին համապատասխան մասնագետներ,
 - ապահովել լեզվաբանական, բանասիրական, միջնշակութային հաղորդակցման բնագավառի մասնագետներ՝ աշխատուժի շուկայի պահանջներին համարժեք.

ԲԱԺԻՆ 1

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՆՈՐԱՑՈՒՄ

Նախաձեռնել կրթական ծրագրերի բովանդակային և կառուցվածքային նորացման փուլային գործընթաց՝ հասարակության արդի պահանջներին և եվրոպական ծրագրային չափանիշներին համահունչ:

1.1 Բոլոնիայի գործընթացի դրույթներին համապատասխան մշակել նոր ծրագրեր և վերանայել առկա ծրագրերը՝ ապահովելով վերջիններիս համատեղելիությունը կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, նպատակ ունենալով կիսթանել ուսանողների մտավոր և անձնային կատարելագործումը, զարգացնել առաջադիմության որակը, քննական մտածելակերպը, ստեղծագործական ջիղը, ուսանողների համագործակցությունը:

1.2 2008թ. ներդնել բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրեր, իսկ 2009 թ. ավարտել ամբողջական անցումը կրեդիտային համակարգի:

1.3 Ապահովել ուսման որակը և անհրաժեշտ մակարդակը ինչպես ուսումնական ծրագրերի բովանդակության, այնպես էլ նոր կրթական ծառայությունների ներդրման և որակի բարձրացման, ուսուցման գործընթացի անհատականացման՝ կրթական տարբեր ձևերի, այլընտրանքային կրթական ծրագրերի, նոր սերնդի դասագրքերի ու ձեռնարկների, ուսուցման նոր ձևերի ու մեթոդների ներդրման միջոցով, որոնք հաշվի կառնեն անհատի հետաքրքրություններն ու ունակությունները:

1.4 Նպաստել Համալսարանի և նրա ստորաբաժանումների լիարժեք ներգրավմանը Բոլոնիայի բարեփոխումներում, ստեղծել սույն ռազմավարության և բուհի զարգացման գործընթացները համակարգող համալսարանական կառույց:

1.5 Ապահովել ուսումնական գործընթացի ամբողջականությունն ու ծրագրային չափանիշների շարունակականությունը, հասարակության և աշխատուժի շուկայի արդի պահանջներին համարժեք ծառայությունների և ծրագրերի օպերատիվ ներդրում:

1.6 Ընդլայնել ուսուցման հնարավորությունները, ստեղծել երեկոյան, հեռավար, նախաբուհական և շարունակական, այդ թվում նաև երկրորդ կրթության ինստիտուցիոնալ հիմքեր:

1.7 Ստեղծել միջֆակուլտետային մագիստրատուրայի բաժին /մագիստրատ/:

1.8 Իրականացնել ուսումնական գործընթացի պլանավորման և կազմակերպման համալսարանական գործող կառուցվածքի վերակազմակերպումը՝ կրեդիտային համակարգի առանձնահատկություններին համապատասխան: Ստեղծել դասընթացներին ուսանողների գրանցման և ուսումնառության արդյունքների կառավարման համալսարանական միասնական կառույց (ռեգիստրարի գրասենյակ):

Կոնտակտային ժամերի նվազեցման շնորհիվ շաբաթական ժամաքանակը սահմանել ոչ ավելի, քան 30 ժամ, իսկ 2010թ. հասցնել մինչև 24 ժամի:

Կամընտրական բաղադրիչը աստիճանաբար նվազեցնել՝ 2010թ. հասցնելով 50%-ի:

1.9 Ստեղծել ըստ մասնագիտական ուղղությունների տարբերակված համալսարանական կրթական նոր ծրագրեր ու չափորոշիչներ, որակավորման բնութագրիչներ՝ սահմանելով տվյալ որակավորման աստիճանի համար անհրաժեշտ և չափելի կարողությունների ու դրանց գնահատման հստակ պահանջները:

1.10 Ստեղծել ՀՀ-ի և արտերկրի կրթական ու գիտահետազոտական գործընթացների փորձի ուսումնասիրման, արտասահմանյան ուսումնական ծրագրերի և դասագրքերի վերլուծական համակարգ:

1.11 Արտասահմանցի ուսանողների համար պատրաստել ուսումնական ծրագրեր՝ անհրաժեշտության դեպքում ապահովելով օտար լեզուներով ուսուցում:

ԲԱԺԻՆ 2

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

2.0 Ընդլայնել դիմորդների ընդունելությունը ուսումնակրթական նոր ծրագրերի ներդրման, նոր մասնագիտությունների (մասնագիտացումների) ուսուցման նոր ձևերի ընդլայնման շնորհիվ:

2.1 Ընդլայնել լեզուների, այդ թվում եվրոպական, միջին և հեռավոր արևելքի, ԱՊՀ-ի, տարածաշրջանի, ինչպես նաև Հայաստանի ազգային փոքրամասնությունների ուսուցանվող լեզուների շրջանակը: Նախատեսել ուսումնական դասընթացներ ըստ խորության տարբեր աստիճանի:

2.2 Ձևավորել համալսարան-դպրոց համագործակցային լայն դաշտ, գործընկեր դպրոցների լայն ցանց, խորացնել համագործակցությունն ուսուցիչների և նրանց միությունների հետ:

2.3 Ընդլայնել և ակտիվացնել Համալսարանի մասին տեղեկատվության տարածումը հանրապետության դպրոցներում և այլ հաստատություններում՝ Համալսարանի ուսանողների, շրջանավարտների և նրանց ինքնավար կառույցների միջոցով:

2.4 Ծավալել արտասահմանյան դիմորդների ներգրավման աշխատանքներ:

2.5 Ընդլայնել դիմորդների համար նախատեսվող դասընթացների ցանցը:

ԲԱԺԻՆ 3

ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՍՋԱԿԵՐՊՈՒՄ

3.1 Ուսանողների շրջանում ուսումնական գործընթացի կազմակերպման նպատակով.

3.1.1 Ապահովել ուսանողների տեղեկացվածությունը կրեդիտային համակարգի առանձնահատկություններին, ակտիվ մասնակցությունը իրենց ուսումնառության անհատական գործընթացի պլանավորմանը, ուսումնառության այլընտրանքային հնարավորությունների և ժամանակացույցների ընտրությանը:

3.1.2 Հասնել ուսումնական գործընթացի ժողովրդավարացմանը, նպաստել ուսանողների ներ- և միջբուհական ակադեմիական շարժունակությանը ընդհանուր եվրոպական բարձրագույն կրթական տարածքում՝ համապատասխանեցնելով դասընթացների կառուցվածքը և ուսումնառության արդյունքների գնահատման չափանիշները ECTS-ի պահանջներին:

3.1.3 Համագործակցելով տարածքային բուհերի և մանկավարժական քոլեջների հետ ստեղծել հեռավար ուսուցման մարզային կենտրոններ:

3.1.4 Համալսարանի առավել փորձառու դասախոսներից ձևավորել ուսումնական խորհրդատուների որակյալ կազմ՝ նախատեսելով խրախուսման գործուն մեխանիզմներ:

3.1.5 Ջարգացնել որակյալ ուսումնառությանը նպաստող օժանդակ ծառայություններ, բարելավել ուսանողների և դասախոսների համագործակցությունը և շփումների մատչելիությունը ուսումնական գործընթացում:

3.1.6 Իրագործել նորամուծություններ, որոնք խթանում են ուսանողի համակողմանի զարգացումը, ներգրավում ուսանողական ողջ հանրությանը:

3.1.7 Ստեղծել ուսմանը նպաստող խրախուսական պայմաններ՝ շնորհալի, տաղանդավոր ուսանողների համար:

3.1.8 Ապագա մասնագիտության համար անհրաժեշտ որակների ձևավորման հետ մեկտեղ զարգացնել ուսանողների վերլուծական և քննադատական միտքը, նրանց ապագա մասնակցությունը հասարակական կյանքին:

3.1.9 Նպաստել ուսանողների բազմակողմանի գործնական պատրաստվածությանը՝ հետևյալ ուղղություններով.

ա/ սոցիալական, որը կնպաստի ուսանողների հասարակայնացման, տարաբնույթ նորմերի և արժեքների հետ ծանոթացմանը, կզարգացնի կոլեկտիվին անդամակցելու ունակությունը՝ որպես վերջինիս հասարակական զարգացման լիիրավ մասնակից,

բ/ անհատականագում, որը հաշվի կառնի սովորողի անհատական որակները, ինքնազարգացումը, ինքնադաստիարակությունը, ինքնակատարելագործումը, ինքնատիրապետումը, ինքնագնահատումը, ինքնակազմակերպումը, ինքնաքննադատությունը, ակտիվությունը, աշխատանքի նկատմամբ հարգանքը, համագործակցության պատրաստակամությունը, կնպաստի մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ փոխհամագործակցությանը, մասնագիտական բոլոր տեսակի խնդիրների իրագործման համար հմտությունների ձևավորմանը,

գ/ հոգեբանական, որը կնպաստի հոգեբանական և համագործակցային մշակույթի զարգացմանը, հանդուրժողականության պատվաստմանը,

դ/ կազմակերպչական-կառավարչական, որը կձևավորի կոլեկտիվի գործունեության կառավարման հմտությունները և կոլեկտիվի ղեկավարման ունակությունները:

3.2 Կադրային ներուժի և ուսուցման որակի ապահովման նպատակով.

Ստեղծել որակապես նոր մեխանիզմներ և չափանիշներ՝ կրթական ծրագրերի բովանդակության, կադրային ապահովվածության և ուսուցման արդյունքների ինքնավերլուծության, ներքին հավաստի գնահատման ու հետագա դիտարկումների համար:

3.2.1 Դեպի կրթական համակարգ ուղղել օժտված, որակյալ կադրային ներուժ, որն ի վիճակի կլինի բարձր մակարդակով կազմակերպելու ուսուցման գործընթացը, զբաղվելու գիտահետազոտական աշխատանքներով, յուրացնելու և աշխատանքային գործունեության ընթացքում կիրառելու նոր կրթական ու տեղեկատվական տեխնոլոգիաներ, ուսանողների մեջ դաստիարակելու բարձր բարոյական, ազգային և համամարդկային արժեքներ:

3.2.2 Բարելավել հաստիքների պլանավորումը և բարձրացնել այդ գործընթացի արդյունավետությունը: Հասնել օպտիմալ քանակական հարաբերակցության ուսանողների, դասախոսների, ուսումնաօժանդակ, վարչական և սպասարկող կազմի աշխատակիցների թվաքանակների միջև (2010թ. դասախոս-ուսանող հարաբերակցությունը դարձնելով՝ 1/15, չդասավանդող անձնակազմ - դասախոս հարաբերակցությունը՝ 1/3):

3.2.3 Մրցութային բարելավված մեխանիզմների հիման վրա իրականացնել դասախոսական կազմի համալրման և աճի հեռանկարային ծրագիր, ապահովելով պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջին տարիքի նվազեցման կայուն միտումներ (մինչև 2010թ. դասախոսների միջին տարիքը 53-ից նվազեցնել մինչև 47)՝ այն զուգակցելով որակական կողմի բարելավման հետ:

3.2.4 Մշակել և ներդնել դասախոսների ուսումնամեթոդական և գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների նոր համակարգ և գնահատման ընթացակարգ՝ պրոֆեսորադասախոսական տարակարգերի առաջընթացի և աշխատավարձի անհատականացված բարձրացման հիմք ընդունելով գործունեության գնահատման արդյունքները:

3.2.5 Ձարգացնել դասախոսների մշտական գործող կատարելագործման և վերապատրաստման համակարգը, դրան նպատակաուղղելով նաև Համալսարանի միջազգային կապերը:

3.3. Որակի գնահատման նպատակով.

3.3.1 Նախապատրաստել և իրականացնել Համալսարանի կրթական ծրագրերի և դրանք կատարող ուսումնական ստորաբաժանումների գործունեության վերլուծության և որակի գնահատման փուլային գործընթաց, մշակել դրանց կիրառելի համակարգ:

3.3.2 Որակի ներքին գնահատման արդյունքների հիման վրա պլանավորել և իրականացնել ուսման որակի բարձրացման և միջազգային պահանջներին համապատասխանեցման միջոցառումներ:

3.3.3. Ուսանողների գործնական և տեսական առարկաների մնացորդային գիտելիքների մակարդակը ստուգելու նպատակով կազմել ծրագրային պահանջները ապահովող թեստերի բանկ և հարցաշարեր:

3.3.4. Մշակել և ներդնել իրականացվող աշխատանքների գնահատման այլընտրանքային եղանակներ:

3.3.5 Կատարելագործել ուսանողների ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման համակարգերը և գործընթացները բոլոր կրթական ծրագրերի համար՝ նպատակ ունենալով բարձրացնել ուսումնառության արդյունքների և ուսուցման արդյունավետության գնահատման որակը և հավաստիությունը:

3.3.6 Նախապատրաստել և նախաձեռնել Համալսարանի կրթական ծրագրերի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացը:

3.4 Մոնիթորինգ

3.4.0 Կրթական գործընթացների որակի և արդյունավետության գնահատման համար մշտապես անցկացնել ներքին դիտարկումներ (մոնիթորինգ).

3.4.1 Կրթական ծրագրերի և դասընթացների,

3.4.2 մեկնարկային հնարավորությունների (ուսանողների կրթական ներուժի, բուհում սովորելու մոտիվացիոն աստիճանի բացահայտման մակարդակ),

3.4.3 պրոֆեսորադասախոսական կազմի (ամբիոնի ուսումնական և գիտական ներուժի բացահայտում, ամբիոնների գիտական, հետազոտական ակտիվության չափում, ամբիոնների դասախոսների աշխատանքի զուգադրում),

3.4.4 ուսանողի դաստիարակության որակի,

3.4.5 թողարկման կրթական որակի շուկայական և հասարակական պահանջների:

3.5 Կրթական գործունեություն

Պատրաստել տեղեկատվական հասարակության պահանջներին համապատասխան մասնագետներ՝ ապահովելով աշխատուժի շուկային անհրաժեշտ լեզվաբանական և միջմշակութային մասնագիտությունների գծով մասնագետներ:

3.5.1 Նորացնել և կատարելագործել մասնագիտական կրթության բովանդակությունը, ներմուծել այլընտրանքային, կամընտրական և նորարական դասընթացներ:

3.5.2 Կատարելագործել Համալսարանում կրթության որակի վերահսկման և կառավարման համակարգը:

3.5.3 Մշակել դասավանդման ուսանողակենտրոն մոտեցումներ՝ կարևորելով դասախոսների ղեկավարությամբ ուսանողների ինքնուրույն և անհատական աշխատանքի դերը, ներդնել գիտելիքների վերահսկման համակարգչային (էլեկտրոնային) և հեռակառավարման համակարգեր:

3.5.4 Հաստատել երկկողմանի հարաբերություններ աշխատուժի շուկայում պահանջարկ ձևավորողների հետ:

3.5.5 Համապատասխանեցնել լեզվի իմացության, դասավանդման և գնահատման չափանիշների համաեվրոպական հայեցակարգին և մակարդակներին:

3.5.6 Մշակել և ներդնել մասնագիտական պրակտիկայի որակապես նոր համակարգ:

3.6 Ուսումնադաստիարակչական աշխատանք

Կրթական ծրագրերը նպատակաուղղել դեպի ԵՎրախորհրդի քաղաքացիական կրթության և եվրոպական ժողովրդավարական կրթության սկզբունքների ու գաղափարների տարածմանը և ներդրմանը: Դաստիարակչական աշխատանքի նորմատիվ բազայի ստեղծում և զարգացում, բովանդակության ու համակարգի կառուցվածքային բարեփոխումներ՝ ազգային և համամարդկային դաստիարակության վրա հիմնվելով՝ ապահովել աշխատանքների համակարգվածություն:

3.6.1 Բարձրացնել ուսանողների՝ իրենց իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացվածության մակարդակը, պատասխանատվության զգացումը:

3.6.2 Համապատասխանեցնել ուսանողների հետ տարվող արտալսարանային աշխատանքը և մասնագիտական ծրագրային պահանջները

3.6.3 Ապահովել դաստիարակող միջավայրի ստեղծում և ձևավորել կոլեգիալ մթնոլորտ (համալսարանական կառույցներ, ակունքներ, ինքնակառավարման մեխանիզմներ),

3.6.4 Պահպանել և զարգացնել համալսարանական ավանդույթները, ապահովել համալսարանական արժեքների ժառանգականությունը:

3.6.5 Ժողովրդավարացնել դասախոս-ուսանող հարաբերությունները, ապահովել փոխադարձ հարգանքի, վստահության և համագործակցության մթնոլորտ:

ԲԱԺԻՆ 4

ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՐԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիական հաստատությունից անցնել գիտահետազոտականի և գիտամանկավարժականի՝ ապահովելով գիտելիքի ոչ միայն փոխանցումը, այլև ստեղծումը:

Գիտահետազոտական ներուժի առավելագույն կիրառում՝ Համալսարանի կրթական գործընթացի և գիտական գործունեության զարգացման ապահովման համար:

Պրոֆեսորա-դասախոսական կազմի և աշխատակիցների գիտահետազոտական աշխատանքի արդյունքների մրցունակության և պահանջարկի մակարդակի բարձրացում:

4.1 Մշակել մշտական գործող միջամբիոնական ծրագրեր, խթանել կոլեկտիվ հետազոտական աշխատանքը, պայմանագրային և դրամաշնորհային հիմունքներով ստեղծել միջամբիոնական գիտական սեմինարների շարունակական ծրագիր:

4.2 Խրախուսել գիտահետազոտական աշխատանքներում ամբիոնների երիտասարդ գիտնականների դրսևորման ձևեր և խթանել դոկտորանտուրան:

4.3 Գիտական գործունեության ոլորտում մշակել և իրագործել նորարական քաղաքականության հայեցակարգ:

4.4 Ընդլայնել ուսումնակրթական հաստատությունների հետ գիտական և գիտամանկավարժական համագործակցության ոլորտը:

4.5. Մշակել դասախոսների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների պլանավորման, հաշվառման, ամփոփման և խրախուսման չափանիշները:

4.6 Գիտահետազոտական, գիտամանկավարժական հաստատությունների հետ համատեղ լուծել գիտահետազոտական և գիտամանկավարժական խնդիրները և ներմուծել մշակված մեթոդները: Խթանել հետազոտությունները բարձրագույն և միջնակարգ լեզվաբանական և հումանիտար կրթության ոլորտում: Առաջնային ուղղությունները համարել.

- Լեզվաքաղաքականություն, ընդհանուր լեզվաբանություն, կիրառական լեզվաբանություն, զուգադրական տիպաբանություն, տեքստի լեզվաբանություն:
- Ռոմանագերմանական բանասիրություն, ռուսագիտություն, հայագիտություն:
- Մանկավարժության և օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի տեսություն և պրակտիկա: Դպրոցական և բուհական դասագրքերի, բառարանների և ուսումնամեթոդական ձեռնարկների պատրաստում:
- Թարգմանության տեսություն և պրակտիկա:
- Միջազգային հարաբերություններ և երկրագիտություն:

- Լեզվի և մշակույթի փիլիսոփայական և հոգեբանական հիմնահարցեր: Տարիքային հոգեբանություն:
- Գրականագիտություն, Եվրոպայի և Ամերիկայի երկրների գրականություն:
- Միջմշակութային հաղորդակցություն և մշակութաբանություն:
- Մարդու իրավունքներ և քաղաքացիական կրթություն: Փոխակերպվող հասարակության սոցիալ- տնտեսական և քաղաքական խնդիրներ:

4.7 Խրախուսել ուսանողական ուսումնագիտահետազոտական գործունեությունը՝ լավագույն ուսանողներին ընդգրկելով ամբիոնների գիտահետազոտական աշխատանքներում, գիտաժողովներում ու սեմինարներում, համատեղ աշխատանքների հրապարակում: Ստեղծել ուսանողական լավագույն հետազոտական աշխատանքների բանկ:

ԲԱԺԻՆ 5

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

5.1 Բարձրացնել Համալսարանի ուսումնական և գիտահետազոտական արդյունքների մրցունակությունը միջազգային ասպարեզում:

5.2 Ընդլայնել Համալսարանում գոյություն ունեցող միջազգային կապերը և ապահովել դրանց որակը և արդյունավետությունը:

5.3 Շարունակել մշտական համագործակցությունը Եվրամիության, Եվրախորհրդի և ԱՊՀ-ի լեզվական և լեզվամշակութային քաղաքականությունը մշակող կառույցների հետ և առավել արդյունավետ կիրառել մշակված փորձը Համալսարանի ուսումնական և գիտամեթոդական գործունեությունում, և այն տարածել հանրապետության այլ կրթական հաստատություններում:

5.4 Անդամակցել միջազգային կազմակերպություններին, նրանց հետ համատեղ մշակել ծրագրեր:

5.5 Ուսումնառությունը ապահովել արտասահմանյան գիտական դպրոցների և առաջավոր մանկավարժական, գիտահետազոտական փորձի նյութերով ու տեղեկատվությամբ:

5.6 Միջազգային գործունեության ոլորտում ստեղծել համագործակցության ինստիտուցիոնալ մեխանիզմներ Համալսարանի և հանրապետության այլ ուսումնական հաստատությունների միջև:

Բարելավել Համալսարանի միջազգային գործունեության պլանավորումը և տեղեկատվական ապահովումը: Ստեղծել նախագծերի մշակմանը, դրամաշնորհների ձեռքբերմանն ու միջազգային կապերի ձևավորմանն աջակցող ծառայություն և միասնական տեղեկատվական բազա:

5.7 Ընդլայնել գործնական կապերը ավանդական ուղղությունների և արտասահմանյան կազմակերպությունների ու հաստատությունների միջև և ստեղծել նոր կապեր համատեղ կրթական ծրագրերի ստեղծման և որակավորման աստիճանների շնորհման ուղղությամբ:

5.8 Ստեղծել միջազգային կապեր հիմնարար և կիրառական խնդիրների համատեղ հետազոտություն իրականացնելու համար, կազմակերպել միջազգային գիտաժողովներ:

5.9 Միջազգային կրթական շուկայում ներգրավել ուսանողական և դասախոսական համակազմ, տրամադրել համապատասխան ծառայություններ և Համալսարանի մասին անհրաժեշտ տեղեկատվություն:

ԲԱԺԻՆ 6

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Համալսարանի ներկայիս բյուջեի եկամտային մասը, որը հիմնականում հիմնված է համալսարանի վճարովի ուսուցումից ստացված եկամուտներից, հնարավորություն է տալիս հաջողությամբ լուծել բուհի պահպանման խնդիրները, սակայն այն անբավարար է զարգացման խնդիրների լուծման համար: Ուստի, բացի գոյություն ունեցող եկամուտների աղբյուրներից, անհրաժեշտ է նախատեսել նոր եկամտային աղբյուրներ, որոնք հնարավորություն կտան հաջողությամբ իրագործել Համալսարանի հիմնական խնդիրները և սույն ռազմավարության շրջանակներում նախատեսվող միջոցառումները:

6.1 Համալսարանի հետագա տարիների բյուջեների եկամտային մասերի ձևավորման գործում էական դեր կունենան.

6.1.1 Համալսարանի միջազգային համագործակցության շրջանակներում տարաբնույթ դրամաշնորհային ծրագրերից, ուսանողների փոխանակման ծրագրերից, նոր մասնագիտացումների հաշվին ստացվող մուտքերը,

6.1.2 ուսուցման նոր ձևերի և մասնագիտությունների ներդրումը,

6.1.3 Համալսարանի կանոնադրությամբ վերապահված ձեռնարկատիրական գործունեության նոր տեսակների կիրառությունից ստացվող մուտքերը, մասնավորապես.

- գիտահետազոտական աշխատանքների իրականացումը,
- հրատարակչական գործը, տպագրական գործը,
- Համալսարանի կանոնադրական խնդիրների հետ կապված մշակութային միջոցառումների իրականացումը,
- լեզուների տարբեր մակարդակի ուսուցման դասընթացների, թարգմանչական, տուրիստական ու տեղեկատվական ծառայությունների մատուցումը:

6.2 Նպատակաուղղել Համալսարանի հետագա ծախսային քաղաքականությունը Համալսարանի առջև ծառայած և կենսական կարևորություն ներկայացնող հիմնախնդիրների լուծմանը, իսկ տարեկան շահույթը ուղղել համալսարանի զարգացմանը և սոցիալական խնդիրների լուծմանը՝ հետևյալ համամասնություններով.

6.2.1. կուտակման պահուստ՝ հնարավոր կորուստների և վնասների վերականգնման նպատակով - շահույթի 10 տոկոսի չափով,

6.2.2 գալիք ժամանակաշրջանի պահուստ՝ կապիտալ (ոչ ընթացիկ ակտիվներ) ձեռք բերելու և շահագործելու նպատակով – շահույթի 30 տոկոսի չափով,

6.2.3 ընթացիկ պահուստ՝ սոցիալական խնդիրների լուծման և խրախուսման նպատակով – շահույթի 60 տոկոսի չափով:

ԲԱԺԻՆ 7

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Համալսարանի տեղեկատվական և տեխնիկական ռեսուրսների համակողմանի զարգացման և մատչելիության, Համալսարանի գործունեության բոլոր բնագավառներում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման նպատակով՝

7.1 Ստեղծել և ներդնել Համալսարանի համակարգչային ղեկավարման համակարգ, որը հնարավորություն կտա ունենալ միացյալ տեղեկատվական ուսումնական տարածք:

Կատարելագործել դասընթացներին ուսանողների գրանցման և ուսումնական առաջադիմության տվյալների կառավարման գործող էլեկտրոնային համակարգերը:

7.2 Օպտիմալացնել գրադարանի կառուցվածքը, ստեղծել էլեկտրոնային ընթերցասրահ, մշակել և ներդնել Համալսարանի գրադարանային տեղեկատվական ռեսուրսների էլեկտրոնային քարտարան, վերանայել և նորացնել գրադարանային ֆոնդը, բարելավել և ընդլայնել գրադարանի կողմից իրականացվող ծառայությունները:

7.3 Բարելավել և կատարելագործել էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների համալսարանական պորտալը:

7.4 Ստեղծել և գործարկել տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցած լսարաններ:

7.5 Ստեղծել էլեկտրոնային հեռավար ուսուցման կենտրոն:

7.6 Վերազինել Համալսարանի դահլիճները՝ ժամանակակից տեխնիկական պահանջներին համապատասխան:

7.7 Ստեղծել ամբիոնների գիտական և կրթական ռեսուրսների միասնական էլեկտրոնային համակարգ:

7.8 Մշակել և ներդնել կրթական ծրագրեր լեզվաբանական հիմքի վրա տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետներ պատրաստելու համար:

ԲԱԺԻՆ 8

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ, ՆՅՈՒԹԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

8.1 Ավելի արդյունավետ դարձնել բուհի կառավարման համակարգը՝ ապահովելով որոշումների կայացման կոլեգիալությունը, թափանցիկությունը, կատարելագործել որոշումների կատարման հսկողության և հետադարձ կապի մեխանիզմները, բարելավել արտա- և ներհամալսարանական հաղորդակցության ցանցը:

8.2 Ճշգրտել ֆակուլտետների և ամբիոնների մասնագիտական ուղղվածությունն ու գործառույթները, տարանջատել պատասխանատվությունները, օպտիմալացնել կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքները:

8.3 Ստեղծել «կարիերայի» կենտրոն:

8.4 Ապահովել աշխատավարձի աճ, հաշվի առնելով աշխատողների վաստակը:

Մշակել և ներդնել դասախոսների գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման ցւցցանիշների համակարգ և գնահատման ընթացակարգ գնահատման արդյունքները հիմք ընդունելով վերակրթական տրակտորման, միջտարակարգային առաջընթացի և աշխատավարձի բարձրացման համար:

Ստեղծել արտոնյալ պայմաններ երիտասարդ դասախոսների հավաքագրման համար:

8.5 Բարելավել շենքային պայմանները՝ առաջնորդվելով գործող նորմատիվներով:

8.6 Բարելավել աշխատողների և ուսանողների հանգստի, սննդի, մարզաառողջարարական պայմանները:

8.7 Գործող օրենսդրության սահմաններում սոցիալական օժանդակություն տրամադրել ուսանողներին:

ԲԱԺԻՆ 9

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱՎԿՈՒԹՅՈՒՆԸ

Հասարակության հետ կապերի զարգացման տեսանկյունից Համալսարանում կարևորվում է հետևյալ միջոցառումների անցկացումը.

9.1 Ապահովել հասարակության հետ Համալսարանի կապերի հետագա զարգացումը, հանրային ծրագրերում Համալսարանի առավելագույն ներգրավումը և Համալսարանի բարի համբավի ամրապնդումը:

9.2 Բարելավել և ընդլայնել կապը Համալսարանի շրջանավարտների հետ, ձևավորել շրջանավարտների տվյալների տեղեկատվական բազա և էլեկտրոնային հաղորդակցության համակարգ:

9.3 Նպաստել Համալսարանի շրջանավարտների միության ստեղծմանը և նրա մասնաճյուղային ցանցի զարգացմանը՝ գործունեությունը նպատակաուղղելով Համալսարանի կանոնադրական խնդիրների իրականացմանը:

9.4 Նպատակաուղղել 75-ամյա հոբելյանը Համալսարանի առաքելության և ավանդույթների քարոզչությանը, նախատեսել Համալսարանի պատմությունն ու ավանդույթները լուսաբանող միջոցառումներ:

9.5 Ապահովել Համալսարանի ակտիվ համագործակցությունը ՁԼՄ-ների հետ, սեփական տեղեկատվական նյութերի հրատարակումը, կատարելագործել կայքը, բարելավել նրա լրատվական ապահովումը, տեխնիկական վիճակը և շահագործման արդյունավետությունը:

9.6 Ստեղծել մշտական գործող արդյունավետ համակարգ Համալսարանի և հասարակության միջև կապերի զարգացման նպատակով: